ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

(200-ամյակի առթիվ)

Պատմ. գիտ դոկտոր Վ. Ա. ԴԻԼՈՅԱՆ

Նոր ժամանակի պատմության մեջ XVIII դարը անխամրելի տեղ է գրավում այն վիթխարի բեկումնային նշանակությամբ, որ ունեցավ մարդկային հասարակության հետագա առաջընթաց զարգացման մեջ։ Եվ XVIII դարի ամենամեծ իրադարձությունը, անկասկած, դարավերջի ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխությունն էր, որը խորտակիչ հարված հասցրեց իր դարն ապրած ավատատիրական-աբսոլյուտիստական վարչակարգին և լայն ուղի հարթեց կապիտալիստական արտադրաեղանակի զարգացման համար։ Ֆրանսիական մեծ հեղափոխության բնորոշ առանձնահատկությունը հեղափոխական պաթոսն էր, ժողովրդական զանգվածների հեղափոխական եռանդը՝ լի դրամատիկական իրադարձություններով և ողբերգական ընդմիջարկումներով։

Ֆրանսիական մեծ հեղափոխության հիմքում ընկած էին այն խոր և անհաշտելի հակասությունները, որոնք առաջացել էին տիրապետող փոքրաքանակ առանձնաշնորհյալ դասերի և բնակչության ճնշող մեծամասնությունն իր մեջ ընդգրկող երրորդ դասի միջև, որի շարքերում առաջատար դերը խաղում էր ժամանակի առաջադիմական ու հեղափոխական դասակարգը՝ բուրժուազիան, հեղափոխության հեգեմոնը։ Վերջինս մարտնչում էր խորտակելու համար կապիտալիստական արտադրաեղանակի զարգացումը խոչընդոտող ժամանակավրեպ ավատատիրությունը։

Չի կարելի անտեսել այն հսկայական հեղափոխականացնող ազդեցությունը, որ ունեցավ XVIII դարում ծավալված լուսավորականության մեծ շարժումը դարավերջի հեղափոխության գաղափարական նպատակասլաց և հետևողական նախապատրաստման գործում։ Դա մինչ այդ պատմության մեջ աննախադեպ գաղափարական հուժկու գրոհ էր հին կարգերի դեմ։ Հեղափոխության նախապատրաստման գործում լուսավորականության շարժման ներկայացուցիչների խաղացած դերի ընկալման առումով մեծապես բնութագրական են Ֆ. Էնգելսի տողերը. «Մեծ մարդիկ, որոնք Ֆրանսիայում լուսավորում էին գլուխները մերձեցող հեղափոխության համար, իրենք էին հանդես գալիս ծայրահեղ հեղափոխականորեն։ Ոչ մի արտաքին հեղինակություն, ինչ կարգի էլ որ դրանք լինեին, նրանք չէին ճանաչում։ Կրոնը, բնության, հասարակության, պետական կարգի ըմբռնումը՝ այդ ամենը ենթարկվում էր ամենաանխնա քննադատության, ամեն ինչ պետք է կանգներ բանականության դատաստանի առջև և կա՛մ արդարացներ իր գոյությունը, կա՛մ հրաժարվեր նրանից»[1]։

Լուսավորականության շարժման ներկայացուցիչների վրա չէր կարող, իհարկե, իր կնիքը չդնել երրորդ դասի դասակարգային խայտաբղետ բազմերանգությունը, տարբերություններ (այն էլ նշանակալի) չառաջացներ նրանց հայացքներում։ Այսուհանդերձ, նրանց միավորում էր մեկ ընդհանուր մեծ նպատակ՝ ավատատիրական կարգի անխնա քննադատությունը նրա բոլոր հաստատություններով, գաղափարախոսությամբ հանդերձ, բացարձակ միապետության բոլոր արատների մերկացումը, նրա ոչնչացման անհրաժեշտության գիտակցումը։

---

[1] К. Маркс, Ф. Энгельс. Соч., 2-е изд., т. 19, с. 189.

Լուսավորականության գաղափարախոսների այս ընդհանուր նպատակի շուրջը միավորման գործում անուրանալի և վիթխարի նշանակություն ունեցավ «Հանրագիտարանի» հրատարակումը։ Շնորհիվ «Հանրագիտարանի» մինչ այդ առանձին-առանձին հանդես եկող, փոշիացած ու կոտորակված ուժերը համախմբվեցին և միասնական ուժերով անցան գրոհի։ Անհաշտ թշնամությունը երկրի առաջընթացը կասեցնող ավատատիրական ու բացարձակ միապետական վարչակարգի նկատմամբ, իրավազուրկ երրորդ դասի իրավունքների ու շահերի պաշտպանությունը մեկ ընդհանուր հզոր փաղանգի մեջ միավորեցին դեիստներին և աթեիստներին, ագնոստիկներին և մատերիալիստներին, սահմանադրական միապետության կուսակիցներին և համոզված հանրապետականներին։ Բավական է թվարկել, թե ովքեր էին աշխատակցում «Հանրագիտարանին», որպեսզի միանգամայն հստակ դառնա այդ աննախադեպ հրատարակության խաղացած մեծագույն դերը XVIII դարի ֆրանսիական հասարակության գաղափարական լուսավորման գործում։ Դիդրո, Դալամբեր, Վոլտեր, Մոնտեսքյո, Բյուֆֆոն, Ռուսսո, Քենե, Տյուրգո, Հոլբախ, Հելվեցիուս, Կոնդիլյակ, Ռեյնալ, Մարլի, Կոնդորսե՝ ահա ոչ լրիվ թվարկումը ժամանակի Ֆրանսիայի գրական և գիտական մտքի աշխարհահռչակ ներկայացուցիչների, ովքեր ստացան հանրագիտակներ անվանումը, ովքեր «որպեսզի ապացուցեն իրենց տեսության համընդհանուր կիրառելիությունը, ընտրեցին ամենակարճ ուղին՝ համարձակորեն կիրարկեցին այն գիտելիքների բոլոր օբյեկտների նկատմամբ այն վիթխարի աշխատության՝ «Հանրագիտարանի» մեջ, որից և ստացան իրենց անվանումը»[2]։

Հեղափոխության գաղափարական նախապատրաստությանը եկան գումարվելու և այն հիմնական դասակարգային հակասությունները, որոնք և կանխորոշեցին հեղափոխության անխուսափելիությունը։ Թագավորության ֆինանսների լիակատար քայքայումը, 1787 թ. ծայր առած առևտրաարդյունաբերական ճգնաժամը, 1788 թ. անբերրիությունը և որպես դրա հետևանք սովը, մի շարք նահանգներում ծայր առած գյուղացիական հուզումներն ու ապստամբությունները, պլեբեյության ելույթները քաղաքներում լրացրին պատկերը և 1788—1789 թթ. երկրում ստեղծվեց հեղափոխական իրադրություն։

1789 թ. մայիսի 5-ին Վերսալում բացվեցին գլխավոր շտատների նիստերը։ Մինչ այդ Ֆրանսիայում ստեղծված պետության և քաղաքացիական հասարակության վերացական դիմառնությունը այժմ արդեն քաղաքական մարմնավորում ստացավ։ Դրա հետևանքը եղավ այն, որ հունիսի 17-ին երրորդ դասի ներկայացուցիչների ժողովը իրեն հռչակեց Ազգային ժողով, որով ծնունդ էր առնում պետական նոր ձև, պետական իշխանության փաստական երկվություն, որ հղի էր պայթյունով։ Դրությունը ավելի սրվեց, երբ հուլիսի 9-ին Ազգային ժողովը իրեն հռչակեց Սահմանադիր ժողով, որով ընդգծում էր իր պարտավորությունը՝ հիմնադրել հասարակական նոր կարգ ու մշակել նրա սահմանադրական հիմունքները, միաժամանակ ծնելով պատրանքներ, թե հասարակության հեղափոխումը կիրականացվի առանց բռնության։

Բայց արքունիքը մտադիր չէր հեշտ ու հանգիստ տեղի տալ և որոշեց հակահարձակման անցնել, ուստի սկսեց Վերսալ և Փարիզ զորք տեղաշարժել, անհուսալի զորամասերը փոխարինել նորերով և հուլիսի 11-ին պաշտոնաթող արեց Նեկկերին։ Այս ամենը բուրժուազիան և ժողովուրդը ընկալեցին որպես հակահեղափոխական ուժերի անցում հարձակման և Փարիզում շայրուսյթի պոռթկում առաջացավ։ Արդեն հուլիսի 12-ի երեկոյան տեղի ունեցան առաջին ընդհարումները ժողովրդի և զորքերի միջև։ Ոտքի ելած ժողովրդական զանգվածները հուլիսի 14-ին գրավեցին Բաստիլը, բացարձակ միապետության խորհրդանիշը, տանելով առաջին հաղթանակը։ Սկսվեց ֆրանսիական մեծ հեղափոխությունը։

---

2 Նույն տեղում, հ. 22, էջ 311։

Ֆրանսիական մեծ հեղափոխության սկզբնական փուլի առանձնահատկությունն այն էր, որ ամբողջ երրորդ դասը միասնաբար հանդես եկավ ատելի բացարձակ միապետական կարգերի դեմ։ Հենց դրանով էր պայմանավորված հեղափոխության հաջող սկիզբը և արագ տարած առաջին հաղթանակը։ Հեղափոխությունը միաձուլեց դասակարգայնորեն տարատեսակ ամբողջ երրորդ դասը, այսինքն՝ ֆրանսիական ազգի ճնշող մեծամասնությունը։ Հեղափոխության հեգեմոնը բուրժուազիան էր՝ ժամանակի երիտասարդ, պատմականորեն առաջադիմական և հեղափոխական դասակարգը, որը հանդես եկավ ժողովրդի հետ դաշնակցած։ Բայց հեղափոխության վերընթաց գծով զարգանալուն զուգընթաց, հեղափոխության տարբեր փուլերում, բուրժուազիայի առանձին շերտեր մեկը մյուսի հետևից սկսեցին հեռանալ հեղափոխությունից՝ վերածվելով նախ պահպանողական, ապա նաև հակահեղափոխական ուժի, իրենց դերը հարկադրաբար զիջելով բուրժուազիայի այն խավերին, որոնք դեռևս չէին սպառել իրենց հեղափոխական հնարավորությունները և շարունակում էին մնալ առաջադիմական և հեղափոխական հասարակական ուժ։

Բաստիլի գրավումը և հեղափոխության հաղթանակը հսկայական արձագանք գտավ երկրում։ Հուլիս և օգոստոս ամիսներին մի լայնածավալ շարժում ընդգրկեց ֆրանսիական քաղաքները, շարժում, որը ստացավ «մունիցիպալային հեղափոխություն» անվանումը։ Դրա ընթացքում, քաղաքների մեծ մասում, նոր մունիցիպալային իշխանության ստեղծմանը զուգընթաց, բուրժուազիան սկսեց ստեղծել նաև իր զինված ուժերը՝ ազգային գվարդիան, որը դիմակայում էր ոչ միայն ավատատիրական-բացարձակ միապետական վարչակարգին, այլև քաղաքային ու գյուղական չքավորությանը։

Բնական է, որ գյուղացիությունը չէր կարող անմասն մնալ հեղափոխությունից։ «Մունիցիպալային հեղափոխությանը» զուգընթաց, գյուղում ծայր առան գյուղացիական հուզումներ ու ապստամբություններ՝ «մեծ սարսափ» տարածելով խոշոր հողատերերի, միաժամանակ նաև իր սեփականության անձեռնմխելիության համար մտահոգված բուրժուազիայի վրա։

Իշխանության գրավումը 1789 թ. նպաստեց բուրժուազիայի համաձուլմանը որպես դասակարգի, որքանով որ երրորդ դասը հանդես էր գալիս իբրև մեկ ամբողջություն ընդդեմ նախկին առաջին դասերի և թագավորական բացարձակապետության։ Դրա հետևանքը եղավ 1789 թ. օգոստոսի 26-ին «Մարդու և քաղաքացու իրավունքների դեկլարացիայի» ընդունումը, որը հեղափոխականացրեց ամբողջ երկիրը և վիթխարի արձագանք գտավ աշխարհում՝ հռչակելով «ազատություն, հավասարություն, եղբայրություն»։ Դա հեղափոխական բուրժուազիայի ծրագրային վավերագիրն էր, որը հռչակում էր հեղափոխության ստեղծած նոր հասարակարգի հիմնական սկզբունքները, տոգորված XVIII դարի լուսավորիչների գաղափարների ոգով։ Դեկլարացիայում արծարծված սկզբունքները՝ մարդկանց իրավահավասարության, անձի ազատության և ճնշմանը դիմադրելու իրավունքի մասին, առաջադիմական դեր խաղացին ոչ միայն ժամանակին, այլև հետագայում։ Բայց հեղափոխությունը իշխանությունը հանձնեց խոշոր բուրժուազիային և լիբերալ աղնվականությանը։ Սահմանադրականները, ի դեմս Միրաբոյի, Լաֆայետի, Բայիի և այլոց, իշխանությունը վերցրին իրենց ձեռքը։

Հեղափոխության առաջին փուլը (14 հուլիսի 1789—10 օգոստոսի 1792) խոշոր բուրժուազիայի տիրապետության ժամանակաշրջանն էր, երբ Սահմանադիր ժողովի օրենսդրությունը և քաղաքականությունը որոշվում էր նրա շահերով։ Բայց և անժխտելի է այն փաստը, որ այս ժամանակաշրջանում ընդունվեցին օրենսդրական ակտեր, որոնք բխում էին ամբողջ երրորդ դասի շահագրգռություններից։ Դրանց թվում հիշատակելի են դասերի վերացման, եկեղեցական ունեցվածքը ազգի տնօրինությանը հանձնելու, եկեղեցական բարեփոխման, հին վարչական բաժանման վերացման և նոր վարչական բաժանումների անցնելու, համքարությունների վերացման, կանոնակարգերի և մյուս սահմանափակումների ոչնչացման վերաբերյալ դեկրետները, որոնք

հիրավի առաջադիմական էին, որովհետև նպաստում էին ավատատիրական կարգի քայքայմանն ու վերացմանը։ Բայց դրա հետ մեկտեղ, խոշոր բուրժուազիայի համառ դիմադրության պատճառով չլուծվեց հեղափոխության հիմնական հարցը՝ ագրարային հարցը, այն է՝ ավատատիրական պարհակների ու պարտությունների լիակատար ու անվարձահատույց վերացումը։ Խոշոր բուրժուազիան և լիբերալ աղնվականությունը չէին կարող, իհարկե, լիովին անտեսել գյուղացիությանը, այն էլ «մեծ սարսափի» պայմաններում, բայց այդ ուղղությամբ ձեռնարկված մասնակի միջոցառումները՝ տասանորդն, որսի իրավունքի, «անձնական» կոչված ավատատիրական պարտությունների վերացումը, չէին կարող բավարարել գյուղացիությանը, որովհետև շարունակում էին ուժի մեջ մնալ հիմնական ավատատիրական իրավունքները։

Խոշոր բուրժուազիայի քաղաքական տիրապետությունը ամրապնդելու նպատակ էին հետապնդում ցենզային ընտրական համակարգի մուծումը և քաղաքացիների բաժանումը այդ հիման վրա «ակտիվների» ու «պասսիվների», Լե Շապելյեի օրենքը գործադուլներն ու բանվորական միությունները արգելելու մասին և այլն։ 1790 թ. հունիսի 18-ի օրենքով «պասսիվ» քաղաքացիները հանվում էին Ազգային գվարդիայի կազմից։ Այս ամենով առանձնանալով երրորդ դասի մնացյալ մասից, խոշոր բուրժուազիան փաստորեն և իրավական առումով հաստատեց իր տիրապետությունը։ Դրա արտահայտությունն էր և այն, որ 1791 թ. հուլիսին Յակոբինյան ակումբը պառակտվեց, այնտեղից հեռացան սահմանադրականները և միավորվեցին Ֆելյանների ակումբում։ Լյուդովիկոս XVI-ի վարենյան փախուստից հետո 1791 թ. հուլիսի 17-ին փարիզցիների ցույցի գնդակոծումը մարսյան դաշտում Սահմանադիր ժողովի հրամանով, ցույց, որի մասնակիցները պահանջում էին թագավորի հրաժարումը գահից, ակնհայտորեն երևան հանեց այն իրողությունը, որ խոշոր բուրժուազիան պահպանողական ուժից վերածվել է հակահեղափոխական ուժի։

1791 թ. սեպտեմբերին վերջնականապես հաստատվեց և օրենքի ուժ ստացավ 1791 թ. սահմանադրությունը, որը հռչակում էր ազգի գերագահության սկզբունքը՝ «ժողովրդից են բխում բոլոր իշխանությունները»։ Ֆրանսիան հայտարարվում էր սահմանադրական միապետություն։ Թագավորն էր նշանակում մինիստրներին և բարձրագույն զորահրամանատարներին, սակայն մինիստրները հաշվետու էին Օրենսդիր ժողովի առջև, բարձրագույն Օրենսդիր ժողովի, որը միապալատյան էր և ընտրվում էր երկու տարով։ Ընտրությունները երկաստիճան էին, ընտրելու և ընտրվելու իրավունք ունեին միայն ակտիվ քաղաքացիները։

Մարդու և քաղաքացու իրավունքների դեկլարացիայի հռչակած քաղաքացիների իրավահավասարության փոխարեն սահմանադրությունը, օրինականացնելով ունեցվածքային անիրավահավասարությունը, սահմանում էր նաև քաղաքական անիրավահավասարություն, լիակատար քաղաքական իրավունքներ վերապահելով ունևորներին և մերժելով դրանք չունևորներին։

Բայց և այնպես, Եվրոպայի երկրների մեծամասնությունում տիրող բացարձակ միապետականության պայմաններում, 1791 թ. ֆրանսիական սահմանադրությունը ուներ անկասկած առաջադիմական նշանակություն։

1790 թ. դեմոկրատական շարժման կենտրոններ են դառնում ժողովրդական ակումբները և ընկերությունները ինչպես Փարիզում, այնպես էլ երկրի մյուս քաղաքներում, որոնք մեծ ազդեցություն ձեռք բերեցին հասարակական կյանքում։

Մեծ դեր էր խաղում Յակոբինյան ակումբը իր մասնաճյուղերով, որի ներսում, ինչպես ասացինք, պայքար էր գնում աջ ու ձախ թևերի միջև և որը հանգեցրեց պառակտման և Ֆելյանների առանձնացմանը։ Առավել դեմոկրատական էր իր կազմով Կորդելյերների ակումբը (Մարդու և քաղաքացու իրավունքների բարեկամների ընկերություն), որը Սահմանադիր ժողովի ղեն-

գային սահմանափակումների դեմ պայքարի գլխավոր կենտրոններից մեկն էր։ Այստեղ էր, որ սկսեց ձևավորվել հանրապետական շարժումը։

Ցենզային ընտրական սիստեմի հիման վրա ընտրված Օրենսդիր ժողովը իր աշխատանքներն սկսեց 1791 թ. հոկտեմբերի 1-ին։ Իր կազմով այն արդեն լիովին բուրժուական էր, ճնշող մեծամասնությամբ կազմված բուրժուազիայի և բուրժուական մտավորականության ներկայացուցիչներից, առավել անհաշտ տրամադրված բացարձակապետության նկատմամբ, բայց և երկյուղածությամբ խոնարհվող մասնավոր սեփականության «սրբազան» ինստիտուտի առջև։ Օրենսդիր ժողովում գերակշռությունը անցավ ֆելյաններին, որոնց աջակցում էր կենտրոնը։ Նման պարագաներում Օրենսդիր ժողովը ի վիճակի չէր լուծելու հեղափոխության առջև ծառացած խնդիրները։

Ֆրանսիայում գնալով ծանրացող տնտեսական անմխիթար վիճակը, ներքին հակահեղափոխական ուժերի աշխուժացումը, արտաքին ինտերվենցիայի իրական սպառնալիքը երկրում ստեղծեցին արտակարգ շիկացած մթնոլորտ։ Ժիրոնդիստները սկսեցին պատերազմ քարոզել, որպեսզի հակահարված տրվի եվրոպական դեսպոտիզմին, որը ինտերվենցիա էր նախապատրաստում։ Արտաքուստ հոգ տանելով ազգի փրկության մասին, իրականում նրանք ձգտում էին ժողովրդական զանգվածների ուշադրությունը շեղել ներքին սոցիալական խնդիրներից և հաստատել իրենց քաղաքական տիրապետությունը։ Որպես առևտրաարդյունաբերական բուրժուազիայի ներկայացուցիչներ, նրանք ձգտում էին նաև ընդարձակել Ֆրանսիայի սահմանները դեպի հյուսիս և արևելք և հասնել նրա տնտեսական դիրքերի ուժեղացմանը Եվրոպայում։

Մյուս կողմից, «փոքր» պատերազմի կողմնակից էր նաև թագավորը, որը հույս ուներ, պատերազմի հաղթական ավարտի դեպքում, ամրապնդել իր դրությունը և ճնշել հեղափոխությունը, իսկ անհաջողության դեպքում կրկին շահել, քանի որ այս անգամ արդեն ինտերվենտները կխեղդեին հեղափոխությունը։

Հարկ է նշել նաև, որ պատերազմի ժիրոնդիստական պրոպագանդան համակրանք էր գտնում ժողովրդական զանգվածների մոտ, արձագանքում էր նրանց հայրենասիրական հեղափոխական զգացմունքներին և հակահեղափոխական ինտերվենտներին հակահարված տալու ձգտմանը։

Նման հանգամանքներում 1792 թ. մարտին թագավորը մինիստրություն կազմեց ժիրոնդիստներից։ Ապրիլի 20-ին Ֆրանսիան պատերազմ հայտարարեց Բոհեմիայի և Հունգարիայի թագավորին, դրանով շեշտելով, որ ինքը պատերազմում է ոչ թե ավտորիական ժողովրդի, այլ միապետի դեմ։

Ֆրանսիական ժողովուրդը խանդավառությամբ ընդունեց պատերազմի մասին դեկրետը, սպասելով արագ և հաջող հեղափոխական պատերազմ։ Սակայն սկզբից ևեթ հետևեցին անհաջողությունները։ Դրանց հիմքում ընկած էր այն, որ ներքին հակահեղափոխությունը աջակցում էր արտաքին հակահեղափոխությանը։ Հունիսի 13-ին Լյուդովիկոս XVI-ը իշխանության զուրկ կոչեց ֆելյաններին։ Գեներալներն ու սպայակույտը դավաճանում էին հայրենիքին, արքունիքն ու թագավորական կուսակցությունը գաղտնի օգնում էին արտաքին թշնամուն, թույլ ու վախկոտ Օրենսդիր ժողովը անգործության էր մատնված։ Ստեղծվեց տագնապալի իրադրություն։ Ֆրանսիայի պատմության այդ պատասխանատու պահին կրկին ժողովուրդն էր, որ ոտքի կանգնեց ի պաշտպանություն հեղափոխական հայրենիքի։ Սեփական նախաձեռնությամբ ժողովուրդը ոտքի ելավ պայքարի ընդդեմ ինտերվենտների։

Ժողովուրդն արդեն իսկ կռահում էր, որ ներքին հակահեղափոխության բույնը Թյուիլրին է, իսկ երբ տեղեկացավ ինտերվենտների բանակների հրամանատար Բրաունշվեյգի հերցոգի մանիֆեստին, որով հայտարարվում էր, որ նրանց մտադրությունն է վերջ տալ անարխիային Ֆրանսիայում, վերականգնել թագավորի իշխանությունը և պատժել խռովարարներին, ինչպես նաև նախազգուշացնում էր, որ թագավորական ընտանիքին հասցված ամենափոքր իսկ վիրավորանքի դեպքում Փարիզը ընաջինջ կարվի, այլոց ժողովրդի համ-

բերության բաժակը լցվեց։ 1792 թ. օգոստոսի 9-ի լույս 10-ի գիշերը սկսեցին ոռոնալ զանգերը, հնչեցին թնդանոթային զարկեր, ժողովուրդը հավաքվեց սեկցիաներում, իսկ առավոտյան զինված ջոկատները շարժվեցին Թյուիլրի, գրոհով վերցրին պալատը։ Թագավորը իրեն հանձնեց Օրենսդիր ժողովի պաշտպանությանը։

Դրության տերը դարձավ Փարիզի հեղափոխական կոմունան, որի անդամները ներկայացան Օրենսդիր ժողով և հաղթանակած ժողովրդի անունից թելադրեցին նրա կամքը։ Լյուդովիկոս XVI-ը գահընկեց էր արվում։ Օրենսդիր ժողովը նրան բնակության վայր հատկացրեց Լյուքսեմբուրգյան պալատը, բայց Կոմունան իր իշխանությամբ ձերբակալեց նրան և բանտարկեց Տամպլ դղյակում։ Դեկրետ հրատարակվեց ազգային Կոնվենտ գումարելու մասին՝ երկաստիճան ընտրություններով և 21 տարեկանի տարիքային ցենզով։ Ստեղծվեց ժամանակավոր գործադիր խորհուրդ, մեծ մասամբ ժիրոնդիստներից, բայց արդարադատության մինիստր նշանակվեց մոնտանյար Դանտոնը։

Օգոստոսի 10-ին հաղթանակած ժողովրդական ապստամբությունը տապալեց արդեն հազարամյա ֆրանսիական միապետությունը, վերացրեց հակադեմոկրատական ցենզային համակարգը։ Հեղափոխության վերընթաց զարգացումը շարունակվում էր։

Կոնվենտի առաջիկա ընտրություններում գյուղացիների ձայները ապահովելու նկատառումով օգոստոս ամսին Օրենսդիր ժողովը, ժիրոնդիստների առաջարկությամբ, ընդունեց մի շարք դեկրետներ՝ համայնական հողերը գյուղացիների միջև բաժանելու, տարագիրների հողերը մանր կտորներով գյուղացիներին անժամկետ տիրակալման տրամադրելու (տարեկան ռենտայի գումարով և երկարատև ժամկետում վճարելու պայմանով), գյուղացիներից ավատատերերի ունեցած հավակնությունների վերաբերյալ դատական բոլոր գործերը կարճելու, բոլոր ավատատիրական իրավունքները, որոնց տերերը չէին կարող դրանք փաստաթղթերով հաստատել, առանց փրկագնի վերացնելու մասին։ Օգոստոսյան այս օրենսդրությունը հեռու էր գյուղացիների պահանջները բավարարելուց, բայց ժիրոնդիստները հույս ունեին դրանով որոշ չափով կայունացնել երկրի ներքին կացությունը։

Շուտով Ֆրանսիայի գլխին կախվեց մահացու վտանգ։ Օգոստոսի 19-ին, ներխուժելով Ֆրանսիայի տարածքը, ինտերվենտները սեպտեմբերի 2-ին գրավեցին Վերդենը, որից հետո ճանապարհը դեպի Փարիզ բաց էր։ Ֆրանսիայում կրկին հնչեց «ի զեն» կոչը։ Փարիզի հեղափոխական կոմունան դեկրետ արձակեց 60 հազարանոց բանակ կազմելու մասին։ Ամեն կողմից կամավորները կրկին փութում էին դեպի ռազմաճակատ։ Շնորհիվ դրա, սեպտեմբերի 20-ին Վալմիի մոտ հեղափոխական Ֆրանսիան հաղթանակ տարավ, որից հետո ֆրանսիացիները մտան Բելգիա, գրավեցին Միջին Հռենոսի շրջանը, ինչպես նաև մտան Սավոյա։ Հեղափոխական Ֆրանսիան փրկված էր։

Սեպտեմբերի 21-ին բացվեց ազգային Կոնվենտը, որտեղ ընտրված էին 750 դեպուտատներ։ Ժիրոնդիստները ունեին մոտ 200 տեղ և կազմում էին Կոնվենտի աջ թևը։ Ձախ թևը Լեռն էր՝ յակոբինյանները, որոնցից ընտրված էր շուրջ 100 մարդ։ Մեծամասնությունը կազմում էին ճահճի կամ Հարթավայրի դեպուտատները, որոնք գնում էին ուժեղի հետևից և սկզբնապես ժիրոնդիստների հենարանն էին։ Սկզբնական շրջանում, հեղափոխական մեծ վերելքի պայմաններում յակոբինյանները ձգտում էին ազգային միասնության և պատրաստ էին հաշտության ձեռք մեկնել ժիրոնդիստներին, քաջ գիտակցելով, որ անզիջում պատերազմը հետադիմական Եվրոպայի հետ դեռ նոր է սկսվում։ Սակայն ժիրոնդիստները, ընդհակառակը, մարտականորեն էին տրամադրված և ձգտում էին խորտակել իրենց հակառակորդներին։

1792 թ. վերջերին մեծ սրության հասավ պայքարը թագավորի ճակատագրի հարցի շուրջը։ Ժիրոնդիստները ամեն կերպ փորձում էին փրկել Լյուդովիկոս XVI-ի կյանքը։ Իհարկե, ոչ թե այն պատճառով, որ նրանց հուզում էր այդ հարցը, այլ քաղաքական նկատառումով, որովհետև նրան պատժից ա-

պատելը նշանակում էր կասեցնել հեղափոխության զարգացումը որոշակի շրջանակներում։ Բայց ևրբ Թյուիլրիում գտնվեցին գաղտնի փաստաթղթեր, որոնք հաստատում էին թագավորի կապը արտաքին հակահեղափոխության հետ, այլևս խուսանավել հնարավոր չէր։ Լյուդովիկոս XVI-ը դեկտեմբերին հանձնվեց Կոնվենտի դատաստանին և, ի վերջո, 721 քվեարկող պատգամավորներից 387-ի ձայնով դատապարտվեց մահվան։ Մահապատիժը իրականացվեց 1793 թ. հունվարի 21-ին։

1793 թ. մարտին Ֆրանսիայի արտաքին դրությունը կտրուկ վատթարացավ։ Անգլիան, Իսպանիան, Հոլանդիան բացահայտ միացան հակահեղափոխական կոալիցիային։ Հակահեղափոխական խռովություն բռնկեց Վանդեայում, որն արագորեն ընդգրկեց Բրետանը և Նորմանդիան։ Սպառնալից դարձավ դրությունը ռազմաճակատներում։ Դավաճանեց գեներալ Դյումուրիեն, ինչը վկայում էր, որ արդեն ժիրոնդիստներն էլ են գլորվում հակահեղափոխության գիրկը։

Այս պայմաններում յակոբինյանները կրկին իրենց վրա վերցրեցին հանրապետության պաշտպանությունը։ Մարտի 10-ին Դանտոնի առաջարկությամբ ստեղծվեց Արտակարգ տրիբունալ հակահեղափոխության դեմ պայքարելու համար։ Ապրիլի 6-ին կազմակերպվեց հասարակության փրկության կոմիտե՝ 9 անդամից բաղկացած, որը իրավունք ստացավ վերահսկելու Գործադիր խորհուրդը և ամենալայն լիազորություններով օժտվեց։ Ամենաազդեցիկ անդամը Դանտոնն էր։

Յակոբինյանները վիթխարի աշխատանք տարան հավաքագրելու համար ժողովրդի ուժերը հանուն հայրենիքի փրկության մղվող պայքարում։ Չնայած ժիրոնդիստների դիմադրությանը, յակոբինյանները Կոնվենտում որոշում անցկացրին բանակի վերակազմակերպման մասին։ Մայիսի 4-ին մտցվեցին հացահատիկի կայուն գներ, կրկին հակառակ ժիրոնդիստների դիմադրության։ Ժիրոնդիստների պառակտողական գործողությունները, քաղաքացիական պատերազմի սանձազերծումը նրանց կողմից՝ ռոյալիստների հետ միացած, Լիոնում, Տուլոնում, Մարսելում նախապատրաստվող հարվածը Փարիզի հեղափոխական կազմակերպությունների դեմ հանգեցրին 1793 թ. մայիսի 31-ի—հունիսի 2-ի ապստամբությանը, որի հաղթանակով ավարտվեց Լեռան և Ժիրոնդայի պայքարը, խորտակվեց ժիրոնդիստների՝ խոշոր առևտրաարդյունաբերական բուրժուազիայի քաղաքական տիրապետությունը և իշխանությունը անցավ յակոբինյանների ձեռքը։

Ժիրոնդայի անկումը և Լեռան տիրապետության հաստատումը նշանավորեց Ֆրանսիական մեծ հեղափոխության անցումը իր երրորդ՝ բարձրագույն փուլին, յակոբինյան դիկտատուրային։ Դիտարկելով հեղափոխության զարգացման ընթացքը, Կ. Մարքսը գրում է. «Ֆրանսիական առաջին հեղափոխության մեջ սահմանադրականների տիրապետությանը հետևում է ժիրոնդիստների տիրապետությունը, ժիրոնդիստների տիրապետությանը հետևում է յակոբինյանների տիրապետությունը։ Այդ կուսակցություններից յուրաքանչյուրը հենվում է ավելի առաջավորի վրա։ Հենց որ տվյալ կուսակցությունը հեղափոխությունն այնքան հեռու է մղում, որ այլևս ի վիճակի չէ հետևելու նրան, ոչ էլ առավել ևս գլխավորելու այն, այդ կուսակցությանը հեռացնում և գիլյոտինի է ուղարկում նրա ետևում կանգնած ավելի համարձակ դաշնակիցը։ Հեղափոխությունը, այդպիսով, շարժվում է վերընթաց գծով»[3]։

Ժիրոնդիստների քաղաքական տիրապետության վերացումը անհրաժեշտ էր հեղափոխության փրկության համար։ Բոլոր կողմերից թշնամական օղակը սեղմվել էր երկրի շուրջը։ 83 դեպարտամենտներից 60-ը ընդգրկված էին խռովություններով։ Հասարակության փրկության կոմիտեն չկարողացավ ո՛չ ևսմք և ո՛չ էլ ընդունակություն դրսևորել շտկելու համար իրերի դրությունը, հաղթահարելու երկրին սպառնացող վտանգները։

---

[3] К. Маркс, Ф. Энгельс. Соч., 2-е изд., т. 8, с. 141.

Անհրաժեշտ էին արագ և եռանդուն գործողություններ և որոշումներ՝ ստեղծված իրավիճակից ելք գտնելու համար։ Ամենից առաջ անհրաժեշտ էր երկրին տալ նոր դեմոկրատական սահմանադրություն որպես միասնական քաղաքական հիմք և դրանով իսկ բացառել ժիրոնդիստների մեղադրանքը, թե Փարիզը հափշտակել է իշխանությունը և իր դիկտատուրան է տարածել ամբողջ Ֆրանսիայի վրա։ Արդեն 1793 թ. հունիսի 24-ին հանդիսավորապես հաստատվեց սահմանադրության վերջնական տեքստը։

Ռոբեսպիերի գրած մարդու և քաղաքացու իրավունքների նոր դեկլարացիան, որպես հասարակության նպատակ հռչակում էր «համընդհանուր երջանկությունը»։ Այն «մարդու բնական ու անձեռնմխելի իրավունքներ» էր հայտարարում ազատությունը, հավասարությունը, անվտանգությունը և սեփականությունը։ Անձի ազատություն, դավանանքի ազատություն, օրենսդրական նախաձեռնության ազատություն, մամուլի ազատություն, համախոսականներ մատուցելու ազատություն, աշխատանքի իրավունք և տկարների հասարակական օգնություն, կրթության իրավունք, ճնշմանը դիմադրելու իրավունք, ապստամբելու իրավունք, «երբ կառավարությունը խախտում է ժողովրդի իրավունքները»—ահա դեմոկրատական այն լայն իրավունքները, որոնք հռչակում էին 1793 թ. դեկլարացիան և սահմանադրությունը։ Ռուսսոյի գաղափարներով տոգորված և լայն քաղաքական ազատության իրական ձգտումով ներծծված այդ սահմանադրությունը բուրժուական ամենադեմոկրատական սահմանադրություններից մեկն էր։

Բարձրագույն օրենսդիր իշխանությունը Օրենսդիր ժողովն էր, որն ընտրվելու էր ամեն տարի մայիսի 1-ին, ուղղակի ընտրություններով, 21 տարին բոլորած ֆրանսիացիների կողմից։ Ժողովի ընդունած օրինագծերը ժողովուրդը պետք է հաստատեր սկզբնական ժողովներում և դրանք օրենքի ուժ էին ստանում, եթե 40 օրվա ընթացքում բոլոր դեպարտամենտների կեսում և ևս մեկ դեպարտամենտում սկզբնական ժողովների մեկ տասներորդ մասը դեմ չի արտահայտվի դրանց։ Գործադիր խորհուրդը նշանակվում էր Օրենսդիր ժողովի կողմից 24 անդամից, դեպարտամենտների ժողովների ներկայացրած թեկնածուների թվից, որի կեսը յուրաքանչյուր տարի պիտի նորացվեր։ Ժողովրդի մեծամասնությունը հանրաքվեով լիովին հավանություն տվեց սահմանադրությանը։

Հեղափոխության հիմնական հարցը՝ ագրարայինը, որ լուծում էր սպասում 1789 թ. ի վեր, և ինչը որ չկարողացան անել Սահմանադիր և Օրենսդիր ժողովներն ու ժիրոնդիստական Կոնվենտը, լուծեցին յակոբինյանները իրենց իշխանության գլուխ անցնելու առաջին երկու ամիսների ընթացքում, ուղի հարթելով գյուղում կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար։ Գյուղացիությունը դարձավ յակոբինյան հանրապետության հզոր և անվերջ հենարանը։

Ինչ վերաբերում է հանրապետության ներքին և արտաքին դրությանը, ապա այն գնալով ծանրանում էր, հակահեղափոխական խռովությունները և տեռորը, Տուլոնի հանձնումը անգլիացիներին, ռազմաճակատում տիրող ծանր վիճակը, քաղցը և այլն պահանջում էին վճռական միջոցառումներ, անցում դիկտատուրայի։ Հետաձգվեց սահմանադրության կիրառումը, մուծվեց պարենամթերքի պետական կարգավորված բաշխում, անցկացվեց համընդհանուր մոբիլիզացիա, բանակի հրամանատարական կազմը թարմացվեց նոր, երիտասարդ ուժերով, ովքեր ռազմական հմտություն և հեղափոխությանը նվիրվածություն էին դրսևորում, հռչակվեց տեռոր հակահեղափոխական դավադիրների դեմ։ Այս բոլորի շնորհիվ 1793 թ. սեպտեմբերից արդեն ձեռք բերվեցին առաջին հաղթանակները ռազմաճակատում, իսկ ձմռանը նախաձեռնությունը լիովին անցավ ֆրանսիացիների ձեռքը՝ անգլիացիներից դեկտեմբերին ետ խլվեց Տուլոնը, Էլզասում ունեցած հաջողությունների շնորհիվ արևելյան սահմանը վերականգնվեց։ Արտաքին քաղաքականության ասպարեզում յակոբինյանները ձգտում էին բարեկամական հարաբերություններ հաստատել

ԱՄՆ-ի, Շվեյցարիայի, Դանիայի հետ։ Թեև անհաջող, բայց փորձեր էին կատարվում Շվեդիային և Թուրքիային հանել կոալիցիայի դեմ։ Բայց պայքարի ելքը դեռ անորոշ էր, հանրապետությունը իր հույսը դեռ պետք է դներ զենքի ուժի վրա։

Բայց առաջին հաղթանակների հետ էլ մակերես ելան ներքին հակասությունները։ Ավատատիրության և նրա մնացուկների արմատախիլ արվելը կարճ ժամանակամիջոցում բուրժուական հարաբերությունների զարգացման համար լայն ու ազատ ուղի հարթեց։ Յակոբինյանների ճնշամիջոցների և սահմանափակման քաղաքականությունը (մաքսիմումը և ռեկվիզիցիաները) վերաբերում էին միայն բաշխման ոլորտին, արտադրությունը զերծ էր մընում դրանից, ուստի և վերոհիշյալ միջոցառումները չէին կարող թուլացնել բուրժուազիայի տնտեսական հզորությունը։ Այստեղից էլ յակոբինյան դիկտատուրայի հիմնական հակասությունը։

Քաղաքային և գյուղական չքավորությունը շարունակում էր մնալ հասարակության ճնշված, ունեզուրկ մասը։ Չէր վերանայվել Լե Շապելյեի հակաբանվորական օրենքը, մաքսիմում էր սահմանվել բանվորների աշխատավարձի վրա։ Գյուղական չքավորությունը հիասթափություն ապրեց, որովհետև պաշտպանություն չէր գտնում յակոբինյանների կողմից։ Յակոբինյանները չկարողացան ճիշտ և հետևողական գիծ մշակել քաղաքի և գյուղի տարբեր դասակարգային խմբավորումների նկատմամբ։ Սրված դասակարգային պայքարում Ռոբեսպիերի կառավարող խումբը ձգտում էր միջին գիծ գրավել աջ և ձախ խմբավորումների միջև։

Պայքարի սրումը յակոբինյան բլոկի ներսում ի վերջո հանգեցրեց նրան, որ հեղափոխական կառավարության ղեկավար խմբակը Ռոբեսպիերի գլխավորությամբ 1794 թ. մարտ-ապրիլին ջախջախեց Շոմետտի և Էբերտականների ձախ խմբավորումները, որոնք պնդում էին հեղափոխության հետագա խորացման վրա, և աջ խմբավորումները՝ դանտոնականներին, որոնք ներկայացնում էին նոր, հեղափոխության տարիներին հարստություն դիզած բուրժուազիային, որը ձգտում էր թուլացնել հեղափոխական դիկտատուրան։ Բայց դրանով ներքին ճգնաժամը չհաղթահարվեց։

Աստիճանաբար և մասնակիորեն յակոբինյան դիկտատուրայից սկսեցին հեռանալ պլեբեյական տարրերը և գյուղական չքավորությունը, որոնց մի շարք սոցիալական պահանջները չէին բավարարվել։ Հակահեղափոխական գիրքերը սկսեց անցնել բուրժուազիայի մեծ մասը, որն այլևս չէր կամենում հաշտվել սահմանափակողական վարչակարգի և յակոբինյան դիկտատուրայի պլեբեյական մեթոդների հետ։ Այն իր հետևից տարավ նաև ունևոր գյուղացիությանը, որ դժգոհ էր կայուն գների և ռեկվիզիցիաների քաղաքականությունից, իսկ սրան էլ հետևեց միջակ գյուղացիությունը։ Եվ մինչդեռ թվում էր, թե 1794 թ. գարնանը և ամռան սկզբին յակոբինյան դիկտատուրայի դրությունը առավել քան կայուն է (Ֆրանսիայի տարածքը մաքրված էր թշնամուց, Իտալիայում ֆրանսիական զորքերը մտել էին Ջենովայի հանրապետություն, պարտության մատնել իսպանացիներին, Ֆլերյուսի մոտ տարած հաղթանակից հետո գրավել Բելգիան և մոտեցել Հոլանդիայի սահմաններին, բարելավել պարենային մատակարարման վիճակը, իսկ Ռոբեսպիերի ժողովրդականությունն ու փառքը հասել կիզակետին), աճում և բազմանում էր Ռոբեսպիերի հակառակորդների թիվը, հասունանում դավադրությունը նրա դեմ։ Այս առումով ուշադրավ է Ֆ. Էնգելսի հետևյալ գիտողությունը. «Ինչ վերաբերում է տեռորին, ապա այն ըստ էության ռազմական միջոցառում էր մինչև այն պահը, քանի դեռ ընդհանրապես իմաստ ուներ։ Դասակարգը կամ դասակարգի մի ֆրակցիան միայն, որը կարող էր ապահովել հեղափոխության հաղթանակը, տեռորի ուղիով ոչ միայն իր ձեռքում էր պահում իշխանությունը (ապստամբությունների ճնշումից հետո այդ դժվար չէր), այլև իր համար գործողությունների ազատություն, լայնարձակություն, հնարավորություն էր ապահովում կենտրոնացնել ուժերը վճռական կետում՝ սահմանի վրա։

Մինչև 1793 թ. վերջը սահմանները համարյա ապահովված էին, 1794 թ. սկսվեց բարենպաստ, ֆրանսիական բանակները գրեթե ամենուր հաջողությամբ էին գործում։ Կոմունան իր ծայրահեղ ուղղությամբ ավելորդ դարձավ, հեղափոխության նրա պրոպագանդան խոչընդոտ դարձավ Ռոբեսպիերի, ինչպես նաև Դանտոնի համար, որոնք երկուսն էլ, յուրաքանչյուրը յուրովի, խաղաղություն էին ցանկանում։ Երեք ուղղությունների այդ բախման մեջ հաղթանակեց Ռոբեսպիերը, բայց այդ պահից տեռորը նրա համար դարձավ ինքնապահպանման միջոց և դրանով իսկ վերածվեց աբսուրդի, հունիսի 26-ին Ֆլերյուսի մոտ Ժուրդանը հանրապետության ոտքերի տակ դրեց Բելգիան, այդպիսով տեռորը կորցրեց ոտքի տակի հողը. հուլիսի 27-ին Ռոբեսպիերը ընկավ, և սկսվեց բուրժուական օրգիան»[4]։

Ներքին հակասությունների աճը, բուրժուազիայի հիմնական ուժերի և գյուղացիության շրջադարձը դարձան յակոբինյան դիկտատուրայի անկման գլխավոր պատճառները։ Հաղթանակեց թերմիդորյան ռեակցիան։

Ֆրանսիական մեծ հեղափոխության պատմական նշանակությունը լավագույնս գնահատել է Վ. Ի. Լենինը։ Նա գրում է. «Վերցրեք ֆրանսիական մեծ հեղափոխությունը։ Նա զուր չի կոչվում մեծ։ Իր դասակարգի՝ բուրժուազիայի համար, որի օգտին աշխատում էր, նա այնքան շատ բան է արել, որ ամբողջ XIX դարը, այն դարը, որ քաղաքակրթություն և կուլտուրա տվեց ամբողջ մարդկությանը, անցավ ֆրանսիական հեղափոխության նշանաբանի տակ։ Այդ դարն աշխարհի բոլոր ծայրերում միայն հենց այն էր անում, որ անց էր կացնում, մաս-մաս իրականացնում, ավարտում էր այն, ինչ որ ստեղծել էին բուրժուազիայի ֆրանսիական մեծ հեղափոխականները, որի շահերին նրանք ծառայում էին, թեև նրանք այդ չէին էլ գիտակցում, քողարկվելով ազատությանը, հավասարությանը և եղբայրությանը վերաբերող բառերով»[5]։

Արմատախիլ անելով ավատատիրությունը և ճանապարհ հարթելով կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար, ֆրանսիական մեծ հեղափոխությունը անմիջական խոր ազդեցություն գործեց Եվրոպայում հեղափոխական և ազգային-ազատագրական շարժումների ծավալման վրա և XIX դարի ազգային-ազատագրական շարժումների վրա առհասարակ ամբողջ աշխարհում։

Հայ իրականության մեջ ևս ֆրանսիական մեծ հեղափոխությունը արձագանք է գտել ինչպես հեղափոխության տարիներին, այնպես էլ հետագա XIX դարի ամբողջ ընթացքում։ Այդ մասին մենք հիշատակություններ ենք գտնում առաջին հայկական պարբերականի՝ «Ազդարարի» էջերում, մի շարք գրքերի հիշատակարաններում, Հովսեփ Արղությանի թղթերում։ Առաջինը հայ պատմագրության մեջ այդ հարցի վրա ուշադրություն է դարձրել Թ. Ավդալբեգյանը «Ֆրանսիական մեծ հեղափոխությունը և ժամանակակից հայերը» հոդվածում։

«Ազդարարի» 1794 թ. թիրա ամսի համարում տպագրված է ռուսահայոց առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի 1793 թ. հունիսի 20-ին հնդկահայերին ուղղված ընդարձակ կոնդակը, որտեղ հանգամանորեն նկարագրելով 1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի իրադարձությունները, խոսում է նաև Ֆրանսիայում տեղի ունեցող իրադարձությունների մասին[6]։

Շատ ավելի կարևոր է այն տեղեկությունը, որ հաղորդում է Արղությանը նույն կոնդակում առևտրական գործերի կապակցությամբ[7], որից երևում է, որ Ռուսաստանի և Ռուսաստանի վրայով Եվրոպայի հետ կապված հայ վաճառականությունը նյութական շոշափելի կորուստներ էր կրել ֆրանսիական հեղափոխության և օտարերկրյա հակահեղափոխական ինտերվենցիայի հետևանքով ստեղծված իրադրության պատճառով։ Այստեղից էլ բխում է այն

---

[4] К. Маркс, Ф. Энгельс. Соч., 2-е изд., т. 37, с. 127.

[5] Վ. Ի. Լենին. Հատ. 33, էջ 457—458։

[6] «Ազդարար», Թիրայ ամսոյ 1794, էջ 21։

[7] Նույն տեղում, էջ 22։

տնհանգստությունը, որ նկատելի է «Ազդարարի» էջերում խաղաղության հարցի կապակցությամբ։ Հատկանշական է, որ «Ազդարարի» լուրերի բաժինը սկսվում է առաջին հերթին խաղաղության վերաբերյալ հաղորդագրությունների տպագրությամբ. «Լուր խաղաղութեան Եւրոպիու զոր փափագմամբ սպասին ամենեքեան թէ և ոչ է եղեալ, սակայն նշոյլն երևի, քանզի կազէթքն պատմեն թէ Սպանիացիք, և Պռուսքն, և հօղանդիզքն յուղարկեալ են զդեսպանսն իւրեանց առ Լօնդօն զի խօսիցէ ընդ թագաւորն բրիթանիացւոց եթէ կամէ առնել խաղաղութիւն ընդ ֆրանսիզաց, որ եթէ բրիթանիացիք ոչ կամիցին ինքնեանք առնելոց են»[8]։ Այսքանը բավական է ցույց տալու համար, որ հընդկահայ վաճառականությունը, ելնելով սեփական շահագրգռություններից, մեծապես ցանկանում էր, որպեսզի Եվրոպայում խաղաղություն հաստատվի, անկախ այն բանից, թե որ կողմը կհաղթանակի, կամ կլինե՞ն արդյոք հաղթողներ կամ պարտվողներ։

Ավելի մեծ հետաքրքրություն է ներկայացնում Հովսեփ Արղությանի վերոհիշյալ կոնդակի այն հատվածը, որտեղ նա պապականության արատների մեջ է փնտրում ֆրանսիական հեղափոխության պատճառները[9]։ Մյուս կողմից էլ նա ուրախ է, որ փշրում են պապի սնոտի իշխանությունը և սուտահամբավ ամբարտավանությունը։ Բայց և նա ցավ է զգում, որ մինչդեռ ուրիշ ազգեր ձերբազատվում են պապականությունից, հայերը ձգտում են պատվաստվել նրան և լրացնել պակասյալների թիվը։

Կասկած չկա, որ առաջնորդվելով, իհարկե, ուրույն մոտեցումով պապականության նկատմամբ, Հովսեփ Արղությանը հեռու չէ այն ճշմարտությունից, որ պապականության և եկեղեցու շահագործման դեմ ընդվզումը ևս ֆրանսիական հեղափոխության հիմնական պատճառներից մեկն էր։ Ընդ որում, այստեղ նրա քննադատության սլաքը ուղղված է պապականության և կաթոլիկ եկեղեցու դեմ։

Արղությանին անհանգստություն էր պատճառում այն պարագան, որ ինչպես տեսանք, յակոբինյանները փորձում էին պատերազմի մեջ ներքաշել Թուրքիային ընդդեմ Ավստրիայի և Ռուսաստանի։ Վերոհիշյալ կոնդակում այդ առթիվ նա գրում էր. «...հաշտութիւնն մնալոց է եթէ անօրէն ֆրանկսիզն ոչ խաբեսցեն զթուրքսն, զի նոքա զխռովութիւն երկուցն կամին, և եթէ թուրքն պատրի ի նոցանէ շատ վատ լինի, և պատերազմն վերանորոգի, աղաչեսցուք զաստուած հաշտութիւն լինիլ կատարեալ՝ որ ազգ մեր ի խաղաղութեան մնասցէ»[10]։

Ֆրանսիական հեղափոխության մասին Ղուկաս կաթողիկոսի գրություններում պահպանված սուղ տեղեկությունները փաստորեն արձանագրությունն են այն լուրերի, որ նա ստանում էր դրսից, մասնավորապես Հովսեփ Արղությանից և Զմյուռնիայի առաջնորդ Իսահակ արքեպիսկոպոսից։

Տարակույս չի կարող լինել, որ ֆրանսիական իրադարձությունները գնահատելիս ավելի շատ տեղ էր հատկացվում և նշանակություն տրվում կրոնաբարոյական մոտիվներին, քան թե հեղափոխության սոցիալ-քաղաքական նշանակությանը։ Երկու կարծիք չի կարող լինել այն մասին, որ մոտավորապես այդ նույն տեսանկյունից էր հարցին մոտենում Շ. Շահամիրյանը, երբ 1792 թ. մայիսի 14-ին գրում էր Ղուկաս կաթողիկոսին, որ ապստամբ ֆրանսիական ժողովուրդը «ոչ միայն հանեալ են ինքնակալ կարողութիւնն թագաւորին իւրեանց, այլև լրբաբար յանդգնեալ են հրամանին հայրապետին իւրեանց, այսինքն՝ սրբազան փափին Հռոմու»[11]։ Այստեղ Շահամիրյանը հարցին մոտենում էր ոչ այնքան Հռոմի պապի պաշտպանության դիրքերից, որքան այն դերից ու նշանակությունից, որ վերապահում է նա հայոց եկեղեցուն ազգային-ազատագրական շարժման մեջ։

8 «Ազդարար», Շամս ամսոյ 1795, էջ 151։

9 «Ազդարար», Բիրայ ամսոյ 1794, էջ 24։

10 Նույն տեղում։

11 Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ, հ. 13, էջ 85։

Հատկանշական է, որ «Ազդարարի» էջերում երբեմն առ երբեմն փայլատակում են նաև համակրական ակնարկներ ֆրանսիացիների հասցեին։ Այսպես, խոսելով ֆրանսիացիների և անգլիացիների միջև 1794 թ. ամռանը տեղի ունեցած ծովամարտերի մասին, «Ազդարարը» հետևյալ տողերն է գրում. «Զայս է խոսկալոյ, զի ազգն ֆրանսիաց այնքան հաստհաստեալ մարտնչին, մինչ զի պնդեցուցեալ էին նաւթիւ գնչանս ոմանց նաւացն, զի մի գուցե յամանցէ տալ զընգունելութիւն թշնամոյն, թեև անկարացեալ ամենայնիւ, առաւել կալան զփոյթ, քան զխոնարհիլ, զի թէ և յընկղմիլ նաւոյն հանեալ զչուրս յոտրցն նոցայ, բայց քաջապէս սրտիւք վառէին զթնդանօթս ձեռօքն, մինչ կալան զվճիռ աբարդին կորովութեան»[12]։

«Ազդարարում» տպագրված ֆրանսիական հեղափոխական օրացույցի տախտակում, որտեղ զուգահեռ տրված էր հայկական օրացույցը ըստ Ազարիայի, կարդում ենք. «Նահանջ տարւոյ յաւելորդ մի օրն կոչեն լասանկուլոտիդ ի նոյն աւուրն վերակրկնելով են դերդումն իւրեանց այսինք Ապրիլեն կամ մեռանիլեն ազատ»[13]։

Իհարկե, ժամանակակիցները երբեք էլ լավագույն դատավորները չեն այն իրադարձությունների, որոնց ականատեսն են կամ մասնակիցը նույնիսկ։ Առավել ևս, եթե նրանք ունեն իրենց ուրույն մտահոգությունները։ Հայ հոգևորական դասի և վաճառականության ներկայացուցիչների թողած և մեր ձեռքը հասած դրավոր վկայությունները, քաղված ֆրանսիական մեծ հեղափոխության նկատմամբ թշնամարար տրամադրված աղբյուրներից, չեն կարող բնորոշել ո՛չ նրանց հասարակական նկարագիրը և ո՛չ էլ դավանած սկզբունքները։ Այդ նույն Հովսեփ Արղությանը, որը բացասականորեն էր տրամադրված ֆրանսիական հեղափոխության նկատմամբ, դառնությամբ գրում էր Լեհաստանի բաժանման մասին. «Պօլկն յամենայնի կիսեցին ընդ թագաւորին իւրեանց, այժմ ակնի ապստամբութեանն նոցա, կամին բառնալ զթագաւորութիւն նոցա, ուստի մեծ կոտրվածք են ի նոսա։ Օրհնեալ (օրինա՞կ) քեզ, զԱրշակունեաց թագաւորութիւնն մեր, որ նախ մասն հատին, և ապա ըրոլորն բարդեալ ի մէջ իւրեանց բաժանեցին»[14]։

Եթե ժամանակակից հայ գործիչները, հասկանալի պատճառներով, չկարողացան ճիշտ կողմնորոշվել ֆրանսիական մեծ հեղափոխության գնահատման հարցում և տուրք ավեցին իրենց ապրած իրականության մտայնությանը, ապա անուրանալի է այն վիթխարի ազդեցությունը, որ ունեցավ այն XIX դարի հատկապես արևմտահայ մտավորականության վրա և՛ քաղաքական, և՛ գաղափարական, և՛ մշակութային առումով։

ВЕЛИКАЯ ФРАНЦУЗСКАЯ РЕВОЛЮЦИЯ
(К 200-летию)

Доктор ист. наук В. А. ДИЛОЯН

Резюме

В статье рассматриваются причины и основные этапы Великой французской революции, а также ее значение для последующего процесса исторического развития. Особое внимание уделено откликам на французскую революцию в армянской действительности в конце XVIII в. Вопреки установившейся в армянской историографии точке зрения отмечается, что в то время делались попытки найти объективные причины революции, а в некоторых случаях проскальзывали даже симпатии к французскому народу. Выявляются причины в целом негативного отношения к событиям во Франции общественно-политических деятелей армянского народа того времени.

---

12 «Ազդարար», Դամաց ամսոյ 1794, էջ 86։

13 Նույն տեղում, էջ 75։

14 Չամչեան. Հայոց պատմութիւն. Գ. գիրք, էջ 251։